ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Փայլակ Թևանյան Հակոբի-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/15 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի հուշանվերը իրենից ներկայացնում է ընկուզենու փայտից պատրաստված 183մմ /±3մմ/ լայնությամբ, 200մմ /±3մմ/ բարձրությամբ վահանաձև հիմնամաս որի եզրերը ունեն ֆրեզային մշակվածություն և դրա վրա 125մմ տրամագծով և 5մմ /±0,5մմ/ հաստությամբ ամրացող միակողմ պատկերով սկավառակ: Սկավառակը պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածքից: Սկավառակի հիմնական գույնը ոսկեգույնն է: Սկավառակը եզերված է 7մմ /±0,5մմ/ լայնությամբ շրջանակով: Սկավառակի ներքևում կորաձև ռուսերեն գրված է «АНТИКОРРУПЦИОННЫЙ КОМИТЕТ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ», իսկ վերևում կորաձև անգլերեն գրված է «ANTI-CORRUPTION COMMITTEE OF THE REPUBLIC OF ARMENIA»: Սկավառակի շջանակը ներսի կողմից եզերված է լաբիրինթանման նախշով, որը լցված է կապույտ էմալով, որը խորհրդանշում է ընթացիկ բացահայտվող գործերը և կապույտ գույնը կրում է պաշտպանական իմաստ: Սկավառակի կենտրոնում զետեղված է 86մմ /±0,5մմ/ տրամագծով շրջան, որի վրա կորաձև գրված է «ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» գրառումը: Սկավառակի կենտրոնում տեղակայված է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ռելիեֆային խորհրդանիշը՝ 71մմ /±1մմ/ x 34,5մմ /±1մմ/ չափերով, որն ունի գլխավերևում կորաձև եզերված Հայաստանի Հանրապետության եռագույնը՝ կարմիր, կապույտ, նարնջագույն էմալներով և ներքևի մասում կապույտ գույնով էմալապատ ժապավենի վրա «ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» գրվածքը: Խորհրդանիշի հետնամասը զարդարված է սրածայր համաչափ դետալներով հավաքված զարդանախշերով որպես համակարգված և սառնասիրտ աշխատանքի խորհուրդ: Հուշանվերի հետնամասում ամրացված է ոսկեգույն կլոր կախիչ: Տուփը՝ ընկուզենու փայտից, չափսերը՝ 210 մմ

	/±1մմ/ x 225 մմ /±1մմ/ , բարձրությունը՝ 50 մմ /±1մմ/ կափարիչը փակված վիճակում։ Տուփի խորությունը 25 մմ/±1մմ/ , իսկ կափարիչինը 10 մմ /±1մմ/։ Տուփի եզրային փայտի հաստությունը 10մմ /±1մմ/։ Տուփը ներսից պատված է շագանակագույն զամշե աստառով։ Ձսպանակաձև սռնիները տեղադրված են կափարիչի բացվող մասի 210 մմ կողմում։ Կափարիչի եզրերը ունեն ֆրեզային մշակվածություն, մեջտեղում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի խորհրդանիշը՝ փորագրված, խորհրդանիշի չափերը՝ 150մմ /±1մմ/ x 75մմ /±1մմ/, որի ներքևի հատվածում փորագրված է ՝ «ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» գրառումը։ Տուփի ետնամասը զամշապատ է, գույնը՝ սև։ Աշխատանքը սկսելուց առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ։ Ամբողջական նկարագիրը տես կցված ֆայլում։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Пайлак Теванян Акопович в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/15 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	